

ըիամ Մազդազենացին, երկու մղոն էր»։ Վիլլիպալտ այցելեց Մազթաղայի որ հայրենիքն էր Ս. Մազդազենացուն, Տիրբերիոյ հիւսիսային կողմը»։ Եպիփան Երուսաղէմացին և Գանիէլ վանական կը խօսին անոր եկեղեցիի մասին որ «կառուցուած էր Մազդազենացուն տան տեղին վրայ»։ Յետագայ բոլոր ուխտաւորները միևնոյն վկայութիւնը կուտան Էլ-Մհնէկի մասին (Bar. gd. էջ 415-416)։

7. Կափառնաուս. — Կափառնաուսը հին Կտակարանին մէջ չէ յիշատակուած, այլ Նորին մէջ։ Այս քաղաքը կը գրաւէ գերակշիռ տեղ մը, վասնզի Յիսուս, Նազարէթի իր համաքաղաքացիներուն Աւետարանի քարոզութիւնը ի զուր փորձելէ յետոյ, իր բնակութիւնը հաստատեց Կափառնաուսի մէջ, որ իր երկրորդ հայրենիքը բրաւ գայն, ինչպէս և կեդրոնը իր մեսիական գործին։ Աւետարանին մէջ բազմաթիւ տեղեր յիշատակուած է այս քաղաքը, որոնցմէ կը հասկցուի թէ Կափառնաուս Կալիլիոյ մէջ Նեփթաղէմի և Ջաբուղոնի սահմանին վրայ կը գտնուէր, Կեննեսարէթի ծովուն արեւմտեան եզերքը։ Այս քաղաքը, այն ատեն ծաղկեալ, ունէր սինակոկ մը, կար հռոմէական փոքր զօրանոց մը և մօտերը ունէր մաքսատուն մը։ Հետեւորար սահմանին ամենէն մերձաւոր քաղաքն էր Դամասկոսէն դէպի ծովային Կեսարիա և Եփրատոս գացող կարաւաններու մեծ ճանապարհին վրայ։

Ս. Եպիփան Կափառնաուսը կը զնէ Բեթսայիտայէն քիչ հեռու։ Ան կը պատմէ նաև թէ կոմս Յովսէպոս Կափառնաուսի մէջ շինած է եկեղեցի մը. մինչեւ նոյն ժամանակները հրեաները միայն կը բնակէին։